



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Առարկան՝ հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անի Ազատյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Ստ. Չորյանի անվան հ. 56
հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ	
-----	1
2. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
-----	2
3. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	
-----	3
4. ԳԼՈՒԽ 1	
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ	
ԲԱՅԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ	
-----	6
5. ԳԼՈՒԽ 2	
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴՐԱԿԱՆ	
ԿՈՂՄԵՐԸ	-----19
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	
-----	21
7. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	
-----	22

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք ապրում ենք թվային հեղափոխության դարաշրջանում, երբ գլխապտուկյտ արագությամբ ընթացող տեխնոլոգիական զարգացումը ամեն րոպե ծնում է նոր պահանջմունքներ և դրանց բավարարմանն ուղղված քայլեր: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները անշեղորեն թափանցել են մեր կյանքի բոլոր ոլորտները և իրենց հաստատուն տեղը զբաղեցրել այնտեղ: Արդեն անհնար է պատկերացնել ժամանակակից հասարակությունն ու աշխարհը առանց համացանցի, համակարգչային ծրագրերի և սմարթֆոնների: Մխալված չենք լինի, եթե ասենք, որ 21-րդ դարի մարդկանց ճշող մեծամասնությունն իր ժամանակի մեծ մասն անցկացնում է համացանցում, սոցիալական ցանցերում, լրատվական և ժամանցային կայքերում. ընդ որում, մարդկանց մի մասի համար համացանցը և տեխնոլոգիաները աշխատանքի միջոց են, իսկ մյուսների համար՝ պարզապես ժամանցի նախընտրելի տարբերակ:

Իսկ ի՞նչ դեր ու ազդեցություն ունեն նորագույն տեխնոլոգիաները մարդկանց կյանքում՝ դրակա՞ն, թե՞ բացասական. սա մի հարց է, որն արդեն տասնամյակներ շարունակ զբաղեցնում է բժիշկներին, գիտնականներին, ուսուցիչներին, ծնողներին և առհասարակ բոլոր այն գիտակից մարդկանց, ովքեր հասկանում են, թե ինչ մարտահրավերներ կարող է պարունակել տեխնոլոգիական առաջընթացը: Հարցին, սակայն, միանշանակ պատասխան տալ անհնար է, այստեղ անհրաժեշտ է նկատի առնել, թե ինչ նպատակով են կիրառվում տեղեկատվական տեխնոլոգիաները, ովքեր են դրանցից օգտվողները (տարիքային ո՞ր խմբի ներկայացուցիչները), որքան հաճախակի և ինչ տևողությամբ է լինում դրանց օգտագործումը, ինչպես են օգտվում համացանցից և թվային տեխնոլոգիաներից, ինչպես են կառավարում տեղեկատվական հեղեղը, ապահովում մեդիաանվտանգությունը և այլ կարևոր հանգամանքներ:

Նորագույն տեխնոլոգիաները, ցանցերը, դրանց մատուցած ծառայություններն ու առաջարկած հնարավորությունները զարգանում և

փոփոխվում են ամեն րոպե. եթե նախկինում համացանցը կապի և հեռահաղորդակցման, որոնողական, ինչ-որ բան դիտելու և նման այլ նպատակներով էր կիրառվում , ապա այսօր արդեն *սարդոստայնը* թափանցել է մարդկային գիտակցության ամենանուրբ ոլորտները: Այսօր արհեստական բանականությունը (Artificial Intelligence, AI) գալիս է փոխարինելու մարդուն կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

Համապատասխան հրահանգների առկայության դեպքում արհեստական բանականությունը նկարում է գեղանկարներ և դիմանկարներ, ստեղծում է սիմֆոնիկ երաժշտություն, լուծում է մաթեմատիկական խնդիրներ, լսում , մտածում և պատասխանում է մարդու փոխարեն: Արդեն իսկ շատ հաճախ է խոսվում և գրվում այն մասնագիտությունների մասին, որոնց շուտով փոխարինելու կգա արհեստական բանականությունը: Վերջին ժամանակներում մասնավորապես հայտնի է ChatGPT- ն. ([ChatGPT, արհեստական բանականության օժտված բոտ](#), որը մշակվել և գործարկվել է 2022 թվականի նոյեմբերի 30-ին OpenAI-ի կողմից: Հատկանշական է նրանով, որ օգտագործողերին հնարավորություն է տալիս կատարելագործել և ուղղորդել/տանել զրույցը ցանկալի երկարությամբ, ձևաչափով, ոճով, մանրամասնության մակարդակով և լեզվով.... 2023 թվականի հունվարին ChatGPT-ն դարձավ պատմության մեջ ամենաարագ աճող սպառողական ծրագրային հավելվածը՝ ձեռք բերելով ավելի քան 100 միլիոն այցելուներ)* : Պատկերացնենք միայն , թե որքանով է հեշտանում համացանցից և թվային տեխնոլոգիաներից օգտվողների աշխատանքը, որքան արագ և հեշտ հասանելի է դառնում ցանկացած տեղեկություն, որի ձեռքբերման համար նախկինում երկար ժամանակ և մեծ ջանքեր էին պահանջվում:

Առաջին հայացքից հետաքրքիր և չափազանց գրավիչ տեխնոլոգիական առաջընթացը, սակայն, մեծաթիվ վտանգներ է պարունակում առհասարակ մարդկության և մասնավորապես երեխաների ու դեռահասների համար: Այդ

* Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան

<https://hy.wikipedia.org/wiki/ChatGPT#%D4%B4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6>

իսկ պատճառով սույն հետազոտական աշխատանքում փորձելու ենք ներկայացնել ոլորտի վերջին զարգացումները, տվյալները, նորագույն տեխնոլոգիաների բերած օգուտն ու աղետալի հետևանքները մանկավարժահոգեբանական տեսանկյունից: Այդ ամենին զուգահեռ ի մի կբերվեն և կներկայացվեն հնարավոր քայլերն ու խնդիրների լուծման օպտիմալ տարբերակներ: Եվ քանի որ սույն հետազոտության թեման նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունն է սովորողի հոգեբանական զարգացման վրա, ուստի մեր վերլուծության թիրախային խումբը կլինեն աշակերտները և ուսանողները. չմոռանանք, սակայն, որ հիմնախնդիրը առնչվում է տարիքային և սոցիալական տարբեր շերտերի :

ԳԼՈՒԽ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ



Այսօր մարդկությանը մեծ վնաս հասցնող սովորությունների և կախվածությունների՝ ծխելու, թմրամոլության, խաղամոլության և այլնի կողքին իր տեղն է զբաղեցրել կախվածությունը համացանցից և համակարգչից, որը ոչ պակաս վտանգավոր երևույթ է: Ճատ հետազոտողներ այդ կախվածությունն անվանում են հոգեկան խանգարում, և այս բնորոշումը կարծես թե լիովին արդարացված է: Այդ երևույթը ծնում է հիվանդագին վիճակ, որը ներկայիս բժշկական հանրության մեջ պատկերավոր անվանում են *թվային թուլամտության վիրուս*: Համակարգիչները, պլանշետները և բջջային հեռախոսները բառիս բուն իմաստով կլանել են ժամանակակից հասարակությունը՝ մի կողմ մղելով նույնիսկ հեռուստացույցն ու քաղաքային հեռախոսները: Ճատ ընտանիքներում գրեթե չեն դիտում հեռուստատեսային հաղորդումներ, եթե չհաշվենք ընտանիքի տարեց անդամներին: Այսօր յուրաքանչյուր քայլափոխի կարելի է հանդիպել երեխաների, պատանիների, երիտասարդների և հասուն մարդկանց, ովքեր անկարող են նույնիսկ կարճ ժամանակով կտրվել Էկրանից:

Անցյալի գիրկն են անցել բակային աշխույժ խաղերը, որոնք առողջ շփում ու մտերմիկ փոխհարաբերություններ էին ստեղծում, նպաստում էին երեխաների ու պատանիների ներդաշնակ աճին ու զարգացմանը: Այս ամենի բացասական հետևանքները, որոնք, անշուշտ, բազմաթիվ են, կփորձենք ներկայացնել մի

քանի հիմնական կետերով:

1.Ֆիզիկական առողջությանը հասցված վնասներ

Առողջությանը հասցված վնասները բազմաթիվ են` քնի խանգարումներ, թուլություն, մշտական հոգնածության զգացում, հիշողության վատացում, ընկալունակության անկում և այլն:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության գեկույցի` բջջային հեռախոսը իր էլեկտրամագնիսական ճառագայթումով քաղցկեղի որոշ

տեսակների առաջացման ռիսկային գործոններից մեկն է: Համակարգչի առջև ժամերով լարված նստելու հետևանքով ծովում է ողնաշարը, առաջանում են տեսողության խանգարումներ: Ամբողջ աշխարհում մեծ տարածում ունի մտավոր և խոսքային զարգացման հապաղումը երեխաների մոտ, ինչը նույնպես որոշ չափով կապվում է էլեկտրոնային միջոցների չարաշահման հետ: Մեր աշակերտները հաճախ են գանգատվում վատ ինքնազգացողությունից, գլխացավերից, ունենում են ուշադրության կենտրոնացման լուրջ խնդիր, դժվարությամբ են ընկալում և մտապահում ուսուցանվող նյութը: Այս ամենի մեջ իր լուրջ, թերևս առաջնային դերն ունի կախվածությունը համակարգչից և բջջային հեռախոսներից:

2.Յոգեկան առողջության խաթարում

Մարմնի առողջությունից ոչ պակաս կարևոր է հոգեկան առողջությունը, որի վրա նույնպես, ավաղ, ավերիչ ազդեցություն ունեն նորագույն տեխնոլոգիաները: Ագրեսիա, նյարդահոգեբանական գրգռվածություն, հուզական գերլարում և բազում այլ խնդիրներ են առաջանում բջջայինների և համակարգիչների չարաշահումից:

Այսօր ամենուր և անընդհատ խոսվում է այն մասին, որ հասարակության մեջ ավելացել են հոգեբանական տարաբնույթ խնդիրները, և անասելի մեծ չափերի է հասել հոգեբանական խնդիրների լուծման համար հոգեբանների,

Նյարդաբանների աջակցությանը դիմելու անհրաժեշտությունը: Ուսումնական հաստատություններում ևս մշտապես ավելանում է հոգեբանների, հատուկ մանկավարժների, սոցիալական և քրեական գործադրության ծառայությունների: Նրանց, ինչպես նաև սովորողների և ծնողների հետ զրույցներից պարզ է դառնում, որ խնդրահարույց դեպքերի ճշող մեծամասնության պարագայում էական դեր ունի բջջային հեռախոսից և համակարգչից կախվածությունը: Ամենապարզ օրինակը՝ երեխան դառնում է կատաղի և անկառավարելի, երբ փորձում են նրան զրկել հեռախոսով զբաղվելու հնարավորությունից: Մեջբերում եմ մի միտք զրույցից այն ծնողի հետ, ում խորհուրդ էի տվել սահմանափակել որդու՝ բջջային հեռախոսով խաղալու ժամանակը, քանի որ 6-րդ դասարանի տղայի մոտ կային ուշադրության և ընկալունակության ընդգծված պակաս և ագրեսիվ վարքագիծ. «Վայ, ի՞նչ եք ասում, եթե ես կամ հայրիկը փորձենք Ա...-ին հեռախոսից զրկել, տունը գլխներիս կքանդի»:

Մեկ այլ դեպք դպրոցական առօրյայից. համադասարանցիների միջև սոսկալի ծեծկռտուքի պատճառ էր դարձել այն, որ ընկերը էլեկտրոնային խաղի թեժ պահին խանգարել էր, և աշակերտը պարտվել էր խաղում: Սա առնվազն փաստում է այն հանգամանքը, որ էլեկտրոնային տարատեսակ խաղերը այն աստիճան են կլանում երեխային, որ նա իրեն նույնացնում է խաղի հերոսի հետ և սարսափելի ծանր է տանում ցանկացած ձախողում:

Հաճախ աշակերտը, խորասուզված լինելով խաղի մեջ, չի լսում դասամիջոցի ավարտն ազդարարող զանգը, չի նկատում ներս մտած ուսուցչին և դասն սկսվելուց հետո էլ դեռ երկար ժամանակ լինում է խաղի ազդեցության տակ:

Համակարգչային խաղերից շատերը ունեն վտանգավոր բովանդակություն, դրանցում կան բռնության տեսարաններ, կիսամերկ մարմիններ, սպանության կամ թմրանյութերի գործածման քարոզ և այլն:



Դեռահասը, ում ներաշխարհը դեռ լիովին զարգացած չէ, ում բնավորությունն ու վարքը դեռ ձևավորման փուլում են, խաղերի ազդեցության տակ փորձում է նմանվել խաղի հերոսներին. լինում է կոպիտ, սառնասիրտ, ագրեսիվ, նյարդային, անդադար ուզում է անել այնպիսի բաներ, ինչպիսիք անում է խաղի հերոսը: Չանտեսենք նաեւ խաղերի մեջ եղած արտահայտությունները, որոնք սովորաբար անընդհատ ու ճիթմիկ կրկնվում են: Օրինակ՝ մոտ 30 անգամ անգլերենով ասում են՝ սպանի՛ր, սպանի՛ր, սպանի՛ր ...

Վերջին ժամանակներում տարբեր երկրներում մեծ աղմուկ հանեցին դեռահասների ինքնասպանության (կամ դրա փորձի) դեպքերը, որոնց դրդապատճառը ենթադրաբար համացանցային խաղերի որոշ տեսակներ էին (մասնավորապես՝ «Синий кит» կոչված խաղը). դրանցում խաղացողը պարբերաբար կատարում էր ինչ-որ հրահանգներ՝ սկսած ամենասովորական ու անմեղ արարքներից մինչև ինքնավնասում կամ այլ վտանգավոր քայլեր: Չկատարելու դեպքում խաղացողը սպառնալիքներ էր ստանում: 2016-2017թթ. մամուլում խոսվում էր դեռահասների շուրջ 130 ինքնասպանության դեպքի մասին ողջ աշխարհում, որոնց պատճառը համարվում էին նմանատիպ խաղերը: Իհարկե, որոշ դեպքերում հնարավոր չէ ցույց տալ անմիջական կապը նշված երևույթների միջև, սակայն անվիճելի է, որ նման բովանդակությամբ նյութերը ուղղակիորեն խեղաթյուրում են դեռահասի զգայուն և փխրուն հոգեկան աշխարհը:

Չամակարգչային խաղերից բացի, հոգեբանության վրա ծայրահեղ բացասական են ազդում լրահոսը, հեռուստատեսային հաղորդումներն ու սերիալները: Բավական է մեկ անգամ թերթել սոցիալական որևէ ցանցի կամ լրատվական կայքէջի լրահոսը (իսկ մեր աշակերտները վստահաբար գրանցված են այդ ցանցերում), որպեսզի համոզվենք, որ այնտեղ գերակշռում է բացասականը՝ աղետներ, վթարներ, դաժան սպանություններ, հանցագործություններ, ընտանեկան բռնության մանրամասներ և այլն: Եվ այս ամենը՝ ամենայն մանրամասնությամբ, արյունալի տեսարանների նկարներով և տեսանյութերով: Այստեղ տեղին կլինի հիշել մեր մշակույթի մեծերից մեկի՝

ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի հարցազրույցը.«Ի՞նչ կարիք կա ցույց տալ սպանված մարդուն 5 րոպե...Արյունոտ... Ցույց են տալիս, հաճույքո՞ւմ...Վթարները...Հաճույքո՞ւմ...Սա ի՞նչ բարբարոսություն է ազգի նկատմամբ, սա ի՞նչ բարբարոսություն է երեխաների նկատմամբ»:*

Եվ ավելի ցավալին այն է, որ նման նյութերը մեծ տարածում և արձագանք են ստանում , քանի որ հասարակությունը սիրում է սենսացիաներ, արտասովոր և սկանդալային պատմություններ, իսկ լրատվականները շատ լավ գիտեն դա և օգտվում են դրանից հևարավորինս մեծ թվով դիտումներ հավաքելու համար:

3. Սոցիալական վարքագծի խանգարումներ



Այս տեսանկյունից դիտարկելիս թերևս ամենամեծ աղետը կարելի է համարել մարդ-մարդ շփման նվազումը կամ բացակայությունը: Թվային տեխնոլոգիաները ժամանակակից աշխարհում արագ տեմպով փոխարինելու են գալիս պարզ, բնական մարդկային շփումներին: Ձեռքով գրված նամակներին, հեռախոսազանգերին, այցելություններին, հանդիպումներին և կենդանի զրույցներին փոխարինում են էլեկտրոնային հաղորդագրությունները, որոնցում էլ շատ հաճախ բառերի և մտքերի փոխարեն նշաններ են (**Էմոջի** կամ **Էմոձի** ([հայ.՝ 繪](#) - նկար և [文字](#) - նշան, սիմվոլ, արտասանությունը՝ [emodzi]), գաղափարագրերի և սմայլիկների լեզու, որն օգտագործում են էլեկտրոնային նամակներում և կայքէջերում):* Այսօր ամենուրեք կարելի է տեսնել մարդկանց , ովքեր նստած են իրար կողքի, բայց զրուցելու փոխարեն խորասուզված են իրենց բջջայինների մեջ: Եվ որքան էլ սոցիալական գովազդը, տարբեր խորիմաստ կոմիքներ և տեսանյութեր փորձեն քննադատել այս երևույթը և մարդկությանը սթափվելու կոչեր անել, միեևնույն է, այն աճում է աղետալի չափերով: Պակասում են ջերմությունը և

*Ամբողջական նյութի հղումը՝ [Սոս Սարգսյանի մտածողությունները](#)

մտերմությունը հարազատների, ընկերների, ընտանիքի անդամների միջև, մինչև անգամ երեխաները ծնողներից չեն ստանում բավարար ուշադրություն և քնքշանք, և խզվում է հոգեկան կապը նրանց միջև:

Մեկ այլ չարիք է համացանցային կյանքը. վիրտուալ աշխարհում երկար ժամանակ անցկացնող մարդիկ կտրվում են իրականությունից և այլևս չեն կարողանում հանդես գալ իբրև հասարակության լիաժեք անդամ. երեխան, ով տարված է համակարգչային խաղերով և համացանցային շփումներով, դժվարությամբ է իրեն գտնում իրական աշխարհում, չի կարողանում նորմալ շփվել և ընկերություն անել հասակակիցների հետ, չի գիտակցում իր տեղն ու դերը վիրտուալ տիրույթից դուրս:

Նորագույն տեխնոլոգիաներից կախում ունեցող մարդը չի կառավարում իր ժամանակը, ինչը նույնպես մեր օրերում խնդիր է : Մեծահասակների պարագայում դա արտահայտվում է, օրինակ, օրը պլանավորել չկարողանալով, տնային գործերը անտեսելով և այլն, իսկ սովորողի մոտ ուղղակիորեն ազդում է ուսման որակի վրա, քանի որ համացանցում անցկացրած ժամանակը նա կարող էր ծախսել սովորելու, զարգանալու և իր ապագան կառուցելու վրա:

Հաջորդը՝ ագրեսիվ պահվածքը սոցցանցերում և տարբեր ֆորումներում: Ի՞նչ է կատարվում հիմա սոցցանցերում. գրեթե ցանկացած քննարկում արագ վերածվում է մարտադաշտի՝ այլակարծության հանդեպ անհանդուրժողականությամբ, փոխադարձ վիրավորանքներով, մեղադրանքներով, զրպարտություններով և հայհոյախոսություններով: Սա տեսնում են երեխաներն ու դեռահասները և, իհարկե, յուրացնում են նույն վարքագիծը: Դպրոցականները ունեն տարբեր առցանց հարթակներ, որտեղ քննարկում են իրենց առօրյա խնդիրները, միջանձնային հարաբերությունները, ինչպես նաև դպրոցի և ուսուցիչների հետ կապված պրոբլեմներ: Եվ այդ առցանց խմբերում դեռահասների վարքագիծը մեղմ ասած անհանգստացնող է. հաճախ նրանք խոսում են անթույլատրելի բառապաշարով, ագրեսիվ են միմյանց հանդեպ, թիրախավորում են խմբի անդամներից մեկին կամ մի

*[Լճնօի - Վիճխալեյիա՝ ազատ հանրագիտարան](#)

քանիսին և ենթարկում են տևական հալածանքի (կիբերբուլինգ)*:

Եվ վերջապես, դպրոցականների շրջանում (և ոչ միայն նրանց) շատ տարածված ու ցավալի մի երևույթ է բջջային հեռախոսները համեմատելը. չգիտես ինչու, նոր, թանկարժեք և բազմաֆունկցիոնալ բջջային հեռախոսը դարձել է մի տեսակ այցեքարտ, երեխաները մրցում են միմյանց հետ այդ հարցում, հասարակ հեռախոսների տերերը իրենց զգում են մի տեսակ ճնշված և նույնիսկ ենթարկվում են ծաղրի, իսկ արդյունքում շատ ծնողներ ստիպված են լինում ամեն գնով ձեռք բերել լավ հեռախոս, որպեսզի իրենց երեխան հասակակիցների մոտ իրեն վատ չզգա: Այստեղ արդեն ավելորդ է խոսելը առողջ արժեհամակարգի մասին:

4. Մեդիաանվտանգության հետ կապված խնդիրներ

«Դպրոցականների գրեթե 90%-ը ծանոթ է համակարգչին, ընդ որում մեծամասնությունը օգտագործում է այն ամեն կամ գրեթե ամեն օր, ամենից հաճախ տանը կամ ընկերների հետ, և միայն 2,5%-ը՝ դպրոցում: Որպես կանոն, համակարգիչը դպրոցականների կողմից օգտագործվում է խաղեր խաղալու, ֆիլմեր դիտելու, երաժշտություն լսելու համար: Կրթական գործունեությունը համակարգչի և ինտերնետի միջոցով բավականաչափ տարածված չէ ...»:

Համացանցը բաց տիրույթ է և սահմաններ չի ճանաչում: Այնտեղ տեղեկատվությունը կանոնակարգված չէ, հետևաբար դեռահասները պաշտպանված չեն այն ամենից, ինչը նրանք չպետք է իմանան: Մեդիագրագիտության պակասը շատ հաճախ հանգեցնում է նրան, որ սովորողը իրեն հուզող հարցերի պատասխանը փնտրում է համացանցի տարբեր կասկածելի կայքերում, ինչը բերում է սխալ աշխարհայացքի և պատկերացումների խեղաթյուրված արժեհամակարգի ձևավորմանը:

* <https://millab.ge/ar/mil-resources/exercises/28/any/any/0/>

* Мантуленко В.В., Особенности использования электронных медиа в учебно - воспитательном процессе общеобразовательной школы, Автореф. 2007

Սոցցանցերը լի են խարդախություններով և մեքենայություններով, որոնց զոհ կարող են դառնալ բոլորը, այդ թվում նաև աշակերտները: Եվ որպեսզի դա տեղի չունենա, ծնողները և ուսուցիչները պետք է աչալուրջ լինեն և մանրամասն բացատրեն երեխաներին և դեռահասներին, թե ինչ վտանգներ է պարունակում համացանցը:

5. Ուսումնառության ընթացքի հետ կապված խնդիրներ

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:* Որքանով են նորագույն տեխնոլոգիաները նպաստում վերը նշված հատկանիշների ձեռքբերմանը:

Համակարգչային ծրագրերն ու էլեկտրոնային կրթական ռեսուրսները մեր վաղուց արդեն կրթական պրոցեսի հաստատուն մասն են դարձել: Ուսումնական հաստատություններում գնահատումը, ինչպես նաև տարատեսակ թղթաբանությունը արդեն կատարվում են համակարգչի օգնությամբ: Դասապրոցեսում ևս կիրառվում են բազմազան և բազմաբնույթ ՏՀՏ ռեսուրսներ և միջոցներ: Այս ամենը եապես հեշտացրել և հետաքրքիր է դարձրել ուսումնառության և դասավանդման ընթացքը. դրա դրական կողմերի մասին կխոսենք առանձին:

Սակայն ՏՀՏ ռեսուրսների կիրառումը հատկապես ակտիվացավ վերջին շրջանում՝ կապված ՔՈՎԻԴ -19 համավարակի տարածման հետ: Աշխարհի տարբեր երկրներ սկսեցին իրականացնել հեռավար կրթություն, և Հայաստանը բացառություն չէր: Հարկ եղավ արագ արձագանքել ստեղծված իրադրությանը և թույլ չտալ, որ համավարակը խոչընդոտի կրթության իրավունքի իրացմանը: Այդ ընթացքում ստեղծվեցին կրթական բազմաթիվ

*** ՀՀ օրենքը հանրակրթության մասին, հոդված 2.4**

նոր ռեսուրսներ ու միջոցներ, իսկ արդեն եղածները սկսեցին լայնորեն կիրառվել դասապրոցեսում:

Այժմ արդեն անհնար է պատկերացնել դասավանդումն ու ուսումնառությունը առանց նորագույն տեխնոլոգիաների: Ժամանակակից աշակերտն ու ուսանողը գրեթե ամեն օր օգտվում են համացանցից այս կամ այն նյութը ձեռք բերելու, տեղեկատվություն ստանալու կամ ճշտելու և այլ նպատակներով: 2023-2024 ուստարուց արդեն հայաստանյան դպրոցներում, 2-րդ դասարանից սկսած, դասավանդվելու է ԹԳՅԳ (թվային գրագիտություն և համակարգչային գիտություն) առարկան: Եվ այսպես, ի՞նչ վտանգներ է պարունակում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը ուսումնառության պրոցեսում:

1. Հայաստանյան որոշ դպրոցներում մեծ ուշադրություն է դարձվում մեդիագրագիտությանը, աշակերտները վաղ տարիքից սովորում են վարել սեփական կրթական բլոգը, գրեթե բոլոր աշխատանքները կատարում են համակարգչով: Եվ եթե հաշվի առնենք, որ սովորողները առանց այն էլ շատ ժամանակ են անցկացնում բջջային հեռախոսների և համակարգիչների մոտ, դասապրոցեսում դրանց անընդմեջ օգտագործումը ավելացնում է այսպես կոչված «Եկրանային ժամանակը», իսկ դրա՝ ֆիզիկական և հոգեկան առողջությանը հասցրած վնասների մասին արդեն խոսվել է սույն աշխատության նախորդ բաժիններում:

2. Աշխարհի տարբեր երկրներում բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ բջջային հեռախոսները խանգարում են սովորողների կենտրոնացմանը և մեծապես նվազեցնում են ուսումնառության արդյունավետությունը: «Աշակերտների կողմից թվային տեխնոլոգիաների չափից ավելի կամ ոչ պատշաճ օգտագործումը դասարանում և տանը, լինի դա սմարթֆոն, պլանշետ կամ նոութբուք, կարող է շեղել, խանգարել և վնասակար ազդեցություն ունենալ ուսման վրա», - ասվում է զեկուլյցում: Դրանում մեջբերվել են միջազգային գնահատման մեծածավալ տվյալներ, որոնք ցույց են տալիս «բացասական կապը» թվային տեխնոլոգիաների չափից ավելի օգտագործման և սովորողների կատարողականի միջև:

Յիմնվելով աշխարհի 200 կրթական համակարգերի վերլուծության վրա՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն գնահատել է , որ յուրաքանչյուր վեցերորդ երկիր արգելել է սմարթֆոնները դպրոցում: Դրանց թվում են Ֆրանսիան և Նիդեռլանդները: Այս ամիս հայտարարելով արգելքի մասին՝ Նիդեռլանդների կրթության նախարար Ռոբերթ Դեյկգրաֆն ասել է. «Ուսանողները պետք է կարողանան կենտրոնանալ և լավ սովորելու հնարավորություն ունենալ, մինչդեռ բջջային հեռախոսները խանգարում են, ինչի մասին վկայում են գիտական հետազոտությունները: Մենք պետք է պաշտպանենք ուսանողներին սրանից»:

ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի գործակալության պնդմամբ՝ ապացույցներ կան, որ բջջային հեռախոսի չափից ավելի օգտագործումը կապված է կրթական արդյունավետության նվազման հետ, և որ դա բացասաբար է անդրադառնում երեխաների հուզական կայունության վրա:

2023-ի կրթական համընդհանուր մոնիտորինգի վերաբերյալ զեկույցը մեքբերում է UNESCO-ի գլխավոր տնօրեն Օդրի Ագուլեի խոսքը. «Թվային հեղափոխությունն ունի անչափելի պոտենցիալ, բայց որպես անհանգստություն է հնչում հարցը, թե դա ինչպես պետք է կարգավորվի հասարակական տիրույթում: Նմանատիպ ուշադրություն է պետք դարձնել կրթության ոլորտում դրա կիրառությանը»:

Չեկույցը հաստատում է, որ որոշ տեխնոլոգիական միջոցներ կարող են որոշակիորեն նպաստել ուսուցմանը, բայց ոչ երբեք այն դեպքում, երբ դրանք չարաշահվում են կամ կիրառվում են անհամաչափ: Մասնավորապես, սմարթֆոնների կիրառությունը կարող է խանգարել ուսուցմանը դասարաններում:

Չեկույցում վկայակոչվում են ուսումնասիրություններ, ըստ որոնց՝ 14 երկրներում ապացուցվել է՝ սմարթֆոնների կիրառությունն ուսանողներին շեղում է սովորելուց: Մասնավորապես նշվում է, որ հեռախոսային ծանուցումներից հետո ուսանողները միջին հաշվով 20 րոպե անց են կարողանում կենտրոնանալ: Բելգիայում, Իսպանիայում և Մեծ Բրիտանիայում

ամարթֆոնները դասասենյակներից հեռացնելը նպաստել է ուսուցման արդյունավետությանը,- վերահաստատում է UNESCO-ի գեկույցը:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ ամարթֆոնների արգելման կոչը հստակ ուղերձ է առ այն, որ թվային տեխնոլոգիաները որպես ամբողջություն, ներառյալ արհեստական բանականությունը, միշտ պետք է ենթարկվեն կրթության «մարդակենտրոն տեսլականին» և երբեք չփոխարինեն ուսուցիչների հետ առերես շփմանը:*

Այսպիսի վկայությունները և ուսումնասիրությունները բավական շատ են աշխարհի զարգացած կրթական համակարգերում, որպեսզի համոզվենք, որ նորագույն տեխնոլոգիաների չարաշահումը մեծ վնաս է հասցնում կրթությանը:

Նույն պատկերն է նաև Հայաստանի կրթական հաստատություններում : Մենք ամեն օր ականատես ենք լինում միջադեպերի, երբ բջջային հեռախոսը շեղում է աշակերտին ուսումնական գործընթացից, իսկ հաճախ նաև կոնֆլիկտային իրավիճակներ է ստեղծում ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում (երբ, ասենք, ուսուցիչը պահանջում է հանձնել հեռախոսը): Փաստ է , որ նույնիսկ եթե աշակերտը հանձնել է հեռախոսը դասն սկսվելուց առաջ, բայց այն գտնվում է դասասենյակում , ապա այս կամ այն չափով խանգարում է դասապրոցեսին. օրինակ՝ աշակերտը փորձում է ինչ-որ պատրվակով մոտենալ և վերցնել բջջայինը, կամ զանգերն ու ձայնային ազդանշանները շեղում են սովորողներին: Սա ընդամենը մի փոքրիկ օրինակ է ուսումնական առօրյայից, բայց նման և բազմաթիվ այլ դեպքերի, կարծում ենք, շատերն են առիթ ունեցել բախվելու:

3. Ավելի բարդ խնդիր է թերևս, էլեկտրոնային միջոցների կիրառումը գրագողության, թեստերի պատասխանները արտագրելու կամ իրար փոխանցելու և ակադեմիական ազնվությունը շրջանցող այլ նպատակներով: Մենք բախվում ենք դեպքերի, երբ աշակերտը, ուսանողը ինքնուրույն չեն

* Global education monitoring report, 2023:

unesdoc.unesco.org/in/rest/annotationSVC/DownloadWatermarkedAttachment/attachment_id=385723eng.pdf&to=435&from=1

կատարում հանձնարարված առաջադրանքը, այլ գտնում են, օրինակ, պատրաստի էսսեն համացանցից, և ստացվում է, որ մի քանի սովորողի մոտ հանդիպում են միևնույն մտքերը: Կամ սովորողը կիրառում է տարբեր ծրագրեր, ասենք, մաթեմատիկական խնդիրը կամ վարժությունը լուծելու համար (օրինակ՝ Photomath հավելվածը):

Այժմ խոսենք խնդրի մասին մեկ այլ տեսանկյունից. SRS կիրառման պահանջը ուսումնական հաստատություններում միանշանակ չի ընդունվում նաև ուսուցիչների կողմից. մասնավորապես հին դպրոցի ներկայացուցիչները, համեմատաբար ավագ սերնդի ուսուցիչները հաճախ դժկամորեն են վերաբերվում այն ամենին, ինչ կապված է էլեկտրոնային ռեսուրսների կիրառման հետ: Հաճախակի կարելի է լսել այսպիսի արտահայտություններ. «Մատյանի թղթային տարբերակն ավելի հարմար էր, մենք կավիճով գրելով ավելի լավ արդյունքի ենք հասել» և այլն: Այս ամենը կարելի հասկանալ, քանի որ մարդու համար երբեմն դժվար է լինում ընդունել նորը, անծանոթը, փոփոխությունը:

Բայց այստեղ չենք կարող չխոսել հակառակ երևույթի մասին ևս. հարցին անդրադարձել է ամերիկյան Time պարբերականը: «Ուղղթոնների ընտանիք» հիմնադրամի կատարած հարցումներով՝ ուսուցիչների 60 տոկոսը Chat GPT -ի միջոցով է կատարում աշխատանքը: Time-ը տեղեկացնում է, որ հարցմանը մասնակցած ուսուցիչներն ասել են՝ գիտեն՝ Chat GPT-ն շատ դեպքերում տալիս է սխալ պատասխաններ: Բայց դա չի խանգարում այս գործիքը կիրառել ոչ միայն դասի պլան մշակելու, այլև ծնողների նամակներին պատասխանելու համար՝ փոխելով միայն երեխաների ու ծնողների անուններն ու որոշ հանգամանքներ:

Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Եգեկիել Դիքսոն-Ռոմանը, մտահոգություն հայտնելով ստեղծված իրավիճակի վերաբերյալ, ասել է, որ արեւմտյան աշխարհում օնլայն կրթությունը, Chat GPT-ն դարձել են հեռանկարային, մինչդեռ պակաս հեռանկարային է դառնում իրական գիտելիքը, ներկայանալի հասարակությունը:

Թեև սա ասվում է արևմուտքի երկրների մասին, սակայն մեր կրթահամակարգը ևս ապահովագրված չէ նման երևույթներից, քանի որ աշխարհում տեղի ունեցող բոլոր զարգացումները շատ արագ հասնում են մեզ և յուրացվում:

Time-ը մեջբերում է նաև Միչիգանի ավագ դպրոցի անգլերենի ուսուցիչ Սառա Միլլարդի խոսքը. «Ես եղել եմ իմ նախկին աշակերտների հարսանիքներին, նրանց ծնողների հուղարկավորությանը, իմ աշակերտների երեխաների ծննդյան օրերի միջոցառումներին: Գրկել եմ իմ նախկին աշակերտներին: Ուրախացել ու լացել եմ իմ աշակերտների հետ: Համակարգիչը երբեք չի կարող դա անել: Երբեք, երբեք»: *

[*https://time.com/6300950/ai-schools-chatgpt-teachers/](https://time.com/6300950/ai-schools-chatgpt-teachers/)

ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Այժմ խոսենք տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների օգուտների մասին:

1. Ժամանակի խնայում

Գերզարգացած և հարափոփոխ աշխարհում ժամանակակից հասարակության ամենամեծ կապիտալը ժամանակն է. օրվա 24 ժամը մեզ միշտ չի բավականացնում պլանավորած անելիքները հասցնելու համար: Այս համատեքստում նորագույն տեխնոլոգիաները անգնահատելի օգնական են. մատի մեկ հպումով հաշված վայրկյանների ընթացքում մենք ստանում ենք անհրաժեշտ տեղեկատվություն, կապ ենք հաստատում աշխարհի տարբեր ծայրերի հետ: Դրա համար նախկինում մեզ պետք էին շաբաթներ ու ամիսներ, մեծ ջանքեր:

Դասապրոցեսում ևս ՏՅՏ միջոցները օգնում են ավելի քիչ ժամանակում ավելի շատ նյութի ծանոթանալ և շատ աշխատանք կատարել: Օրինակ՝ 5-րդ պեանոց տեսանյութը կարող է տալ նույն ինֆորմացիան, ինչ մի քանի էջանոց շարադրանքը: Կոնկրետ մայրենի, հայոց լեզու և գրականությունն առարկաների դասավանդման ընթացքում էլեկտրոնային ռեսուրսները մեծապես բարձրացնում են դասի արդյունավետությունը: Նախապես մշակված էլեկտրոնային դասի ընթացքում հնարավոր է կրկնակի շատ նյութ հաղորդել և ամրապնդել. ժամանակ չենք ծախսում, օրինակ, գրատախտակին կավիճով գրելու վրա, այլ աշխատում ենք արդեն պատրաստի տեքստի վրա:

2. Արդյունքների արագ և հեշտ ամփոփում

ՏՅՏ տարբեր միջոցների կիրառմամբ կարելի է արագ և հեշտ ստուգել, ասենք, հայտորոշիչ կամ այլ գրավոր աշխատանքներ: Ճատ դեպքերում աշակերտները հենց կատարելու ընթացքում են նկատում իրենց թույլ տված սխալը, և սա օգնում է գիտելիքը ամրապնդելուն: Առցանց գրավոր աշխատանքները անփոխարինելի են հատկապես հեռավար ուսուցման դեպքում:

3.Մոտիվացիա և մասնակցության մեծ ցուցանիշ

Մեր փորձը ցույց է տվել, որ Էլեկտրոնային ռեսուրսի ճիշտ և նպատակային կիրառմամբ դասի ընթացքում ապահովված է դասարանի 100% մասնակցություն: Պատճառներից գլխավորը, թերևս, այն է, որ մենք այստեղ օգտագործում ենք վերևում արդեն իսկ նշված բացասական կողմերից մեկը՝ համացանցային կախվածությունը՝ ստանալու համար ցանկալի արդյունք դասի ընթացքում: Որևէ աշակերտի պետք չէ ստիպել կամ համոզել, որ վերցնի հեռախոսը և փորձի մասնակցել դասին. նույնիսկ այն դեպքերում, երբ սովորողի մոտ հեռախոս չկա կամ թույլ է կապակցումը համացանցին, աշակերտները սիրով համախմբվում են և կատարում աշխատանքը դասընկերոջ հեռախոսով:

5. Ավելի հետաքրքիր, վառ ու պատկերավոր դաս

Ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել. սա հայտնի խոսք է , որը շատ տեղին է այս պարագայում: Էլեկտրոնային գրատախտակը մագնիսի պես ձգում է սովորողներին. այն, ինչ դժվար կհասկանային և չէին մտապահի, անջնջելի կերպով տպավորվում է, երբ տեսնում են և լսում վառ և պատկերավոր տեսանյութում կամ տեսադասում: Ավելին, սովորողներն իրենք են սիրում ստեղծել ուսումնական նյութեր ՏՅՏ միջոցների կիրառմամբ, և մեծ մասամբ դրանք հետաքրքիր ու հաջողված են: Մի մասնավոր դեպք իմ մանկավարժական պրակտիկայից. Քովիդ -19 համավարակով պայմանավորված հեռավար ուսուցման ընթացքում, երբ սովորողներին գործնական աշխատանք հանձնարարեցի Էլեկտրոնային ռեսուրսի կիրառմամբ (LearningApps), հաշված ժամերի ընթացքում աշակերտները սկսեցին ուղարկել մեկը մյուսից հիանալի և լիարժեք աշխատանքներ (նախկինում դրա համար երկար ժամանակ և բազմաթիվ հիշեցումներ էին հարկավոր) : Եվ ուշադրության է արժանի այն փաստը, որ այդ ընթացքում առավել ակտիվ էին այն աշակերտները, որոնք սովորաբար աչքի չէին ընկնում դասարանում: Արդյունքում ստեղծվեց հայոց լեզվի և գրականության տարբեր թեմաներով Էլեկտրոնային ռեսուրսների մի ամբողջ շտեմարան:

6. Մեղիահամտությունների զարգացում

Ուզենք թե չուզենք, համացանցն ու տեխնոլոգիաները մեր կյանքի անբաժան մասն են, ուստի դրանց չտիրապետելը խնդիրներ է ստեղծում ամօրյայում , ուսման և աշխատանքի ընթացքում: Ուստի ժամանակի հրամայականն է, որ թե՛ ուսուցիչները, թե՛ սովորողները հնարավորինս լավ տիրապետեն ՏՅՏ գործիքներին և կարողանան ծառայեցնել դրանք իրենց մասնագիտական առաջընթացին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես, տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաները անկասկած ունեն իրենց դրական և բացասական կողմերը: Հարցն այն է, թե ինչ տեսանկյունից ենք մենք դիտարկում դրանց կիրառումը: Փաստ է, որ դրանցից հրաժարվել այլևս անհնար է, բայց կարելի է ՏՅՏ միջոցները հմտորեն ծառայեցնել կրթությանը: Դրանց չափավոր կիրառությունը միմիայն նպաստելու է կրթության որակի բարելավմանը և մի տեսակ օգնելու է ջնջել ուսուցիչ-սովորող անջրպետը: Սակայն դրանց օգտագործումը դասապրոցեստում պետք է լինի նպատակային, պետք է խստորեն վերահսկվի ուսուցչի, իսկ տանը՝ ծնողի կողմից: Բացի դրանից, սովորողը չպետք է լինի պասիվ կատարող, նա պետք է նաև ինքը ստեղծի էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, որպեսզի և՛ աճի հետաքրքրությունը ուսումնասիրվող նյութի հանդեպ, և՛ սովորողը լիարժեք բացահայտի նորագույն տեխնոլոգիաների ուսուցողական հնարավորությունները: Չմոռանանք նաև, որ արդյունավետ կրթությունը հիմնված է ուսուցչի և աշակերտների՝ դեմ առ դեմ շփման վրա: Տեխնոլոգիաները պետք է դիտարկել որպես կրթության որակի ապահովման հավելյալ հնարավորություն:

Իբրև ամփոփում հիշենք մեծն Թումանյանի՝ թևավոր խոսք դարձած հետևյալ միտքը. «*Ծաղիկը դրված է մեջտեղը, և նույն ծաղկից մեղուն մեղր է շինում , օձը՝ թույն...*»*: Այն, իհարկե, ասվել է բուլորովին այլ առիթով, սակայն շատ դիպուկ նկարագրում է և մեր խնդրո առարկան. համացանցը և նորագույն տեխնոլոգիաները կարող են լինել մեծագույն չարիք, սակայն գրագետ և չափավոր մոտեցման դեպքում դրանք հիանալի գործիք են կրթության զինանոցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան
2. MLab (ՄՏԼԳ ռեսուրսներ)
3. Мантуленко В.В., Особенности использования электронных медиа в учебно - воспитательном процессе общеобразовательной школы, Автореф. 2007
4. ՀՀ օրենքը հանրակրթության մասին, հոդված 2.4
5. Global education monitoring report, 2023:
6. TIME.com
7. Թումանյան «Ոչ գրական ոչնչությունները քննադատ»